

Les annonces sont reçues à des prix très modérés.

# ԱՐՁԱՒԱՅՅՍ

## Լ Ր Ա Պ Ի Ր

### ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՎՈՒԻ ԶՈՐԵԲՇԱՐԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Les annonces sont reçues à des prix très modérés.

#### ԲԱՃԱՆՈՐԳՆԵՐԻ ԲԱՅՈՒՆՆԵՐ

Տնտեսական 100	Բնական 50
Ստիլ և ԲՈՅՈՒՆՆԵՐ	Ստիլ և ԲՈՅՈՒՆՆԵՐ
Ստիլ և ԲՈՅՈՒՆՆԵՐ	Ստիլ և ԲՈՅՈՒՆՆԵՐ
Ստիլ և ԲՈՅՈՒՆՆԵՐ	Ստիլ և ԲՈՅՈՒՆՆԵՐ

ԲԱՃԱՆՈՐԳՆԵՐԻ ԲԱՅՈՒՆՆԵՐ  
և ԲՈՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՅՈՒՆՆԵՐ  
և ԲՈՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՅՈՒՆՆԵՐ

և ԲՈՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՅՈՒՆՆԵՐ  
և ԲՈՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՅՈՒՆՆԵՐ

և ԲՈՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՅՈՒՆՆԵՐ  
և ԲՈՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՅՈՒՆՆԵՐ

ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԵՆ  
Ս. ՓՈՐՈՍԻԱՆ  
և ԲՈՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՅՈՒՆՆԵՐ  
և ԲՈՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՅՈՒՆՆԵՐ  
և ԲՈՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՅՈՒՆՆԵՐ

Adresse:  
E. ՊՐՕՏՏԻԱՆ  
Direct. - propr. du journal Arménien  
ARCHALOUYON  
LE CAIRE (EGYPTE)

ԱՍ ՄԻՆՉՈՒԱԼ ԼԱՅՑԻ քաղաքացի  
Բարեկամները և անմտերիները  
և անմտերիները և անմտերիները  
և անմտերիները և անմտերիները

ՆՈՐ ՓՈՓՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ  
Այժմ հարկ կը համարենք ուշադրու-  
թեամբ հրատարակ մեր ընթերցողներուն թէ՛  
առաջիկայ Մարտ 1ին 1903 Արշալույսի մէջ  
կարեւոր փոփոխութիւններ պիտի ըլլան  
կազմութեամբ նոր խմբագրութեան, որ  
գործի պիտի ձեռնարկէ նոյն ամսոյ սկիզբը:  
Արշալույսի հասցէն մինչեւ ներկայ  
ամսոյ վերջը անփոփոխ պիտի մնայ:

ՅԱՒԵՐԳԳ ՀԱՅՐԵՆԵԱՑ  
Գնել փափաքողը կրնան գիտել թեր-  
թիս Խմբագրութեան:  
Թիթիակազմի գինն է 10 դահեկան ողջ:

ԻՆՉ ՊԵՏՔ Ե ԸՆԵԼ  
Այս անկարելի հարցին պատասխան մը  
տալու համար արդէն անգամ մը ճամբայ  
եկանք, բայց մեր ուղեւորութեան ընթաց-  
քին մէջ՝ Իլիւսներու, Ֆոֆիներու, Կիրգոր-  
ներու և Աստուտներու հանդիպելով, ու-  
րոնք Սոստանի առեւտրական մէկ ճիւղը մը  
չկրցանք որոշ բան մը ըսել. հիմակ հա-  
սած է կարգը mettons-nous les points sur  
les i-ն:

Եթէ անցեալ անգամ լինչ պէտք է  
ընէ՞լին պատասխանը չտուինք, գոնէ բան  
մը ըրած եղանք մէկ երկու շօշափելի օրի-  
նակ մէջտեղ դնելով, որոնց անփոփոխու-  
թիւնը շատերը խոտով անցան. Բայց ին-  
չո՞ւ ատոնց ինչ նպատակաւ գրուած ըլ-  
լալը բացատրել. մի՞թէ ամէն մարդ չ'զի-  
տե՞ր որ փրկուող ալ առակներով կը խօ-  
սէր, իսկ առանձինն մեկնէր նոյա զամե-  
նայն. մեր օրինակները այդպիսի նպատա-  
կաւ մը դրուեցան և ատոր համար է որ  
միեւնոյն հարցը կրկնելու պէտքը զգացինք.  
և մի՞թէ գերազարկան ստիպողականութիւն  
մը չ'ունենք իր մէջ մեր նախորդ թուով լը-  
րած խոտովն ալ. մանաւանդ թէ՛ այս ու-  
րիչ շարունակելի յիշերու ալ չ'ունենիր:  
Հիմակ նորէն հարցնենք, լինչ պէտք է  
ընել:

Տպագրութեան կարեւորութեան վրայ  
ասկէ առաջ խօսած ենք արդէն. նա վար-  
ժարանն է մեծ ու պզտիկ մանուկներու:  
Մանուկները անոր շնորհիւ դասագիրք կ'ու-

նենան իրենց ձեռքը, իսկ մեծերը՝ թէ՛ ի-  
րենց միտքը զարգացնելու և թէ՛ իրենց  
քաղցրիկ և օգտակար ժամանցները ունե-  
նալու համար. դարձեալ պէտք է որ տը-  
պագրութեան գէշ ու աղէկ արտագրու-  
թեանցը դիմեն անհրաժեշտաբար:

Միջավայրին զաւով՝ Եգիպտոսը չ'ը-  
մանիր թուրքոյ կեդրոնին, Պօլիսին, ուր  
բազմաթիւ հանդիպած ենք մամուլի յանձնե-  
լի օրաթերթի մը մէջ էլը ամբողջովին  
վերջու ելու հրամանը տրուելը, գրաքննիչին  
մէկ մատին շարժումով. խմբագրողին չը-  
ուարումը, ժամանակին անբաւականութիւ-  
նը, միջոցներու սղութիւնը: Ռուսոյ հայե-  
րըն ալ այս տեսակետով միեւնոյն անհա-  
խանելի դիրքին մէջ են. ցեղնորդ հրա-  
ման չ'տար... Ահա երկու հայաշատ կեդ-  
րոններ, ուր բայի արտոնութեան՝ ամէն  
տեսակ տարազ կարելի է գտնել. կարող  
գրիչներ կան՝ բայց իրենց արտագրութիւ-  
նը կամ տեղ մը թաղուած պիտի օչնա-  
նայ, կամ առանց արեւի երես տեսնելու  
կրակի բոցերուն մէջ ծուխի վերածուելով  
անհունին մէջ պիտի ըլլան. արժեք չ'տա  
մը տեղերէ զատ Եգիպտոսն ալ միջավայր  
մը, և զայն վերաբերեալ ստուար թիւ մը  
ունի իր ծոցին մէջ, բայց մինչև «Փարոս»  
ին հրատարակուելը լուրջ կերպով մտածող-  
ներ եղան. անոր կարեւորութիւնը ըմբռ-  
նողներ եղան. անկէ օգտուել շանայողնե-  
ներ եղան:

Եղած են պարագաներ, որ Արշալույս  
ի էջերուն մէջ անգամ, «Փարոս» ի հրատա-  
րակման և դարարին առթիւ անոր Տեր-  
հրատարակչին արարքները քննադատուած  
են. բայց ըսէ՛ք, կ'աղայե՛մ, որ մ'ալ մէկը  
գտնուեցան որ քննադատելէ առաջ շարժի  
երեկոյ մը երթար ինչո՞ք Ալիփիարին ըսէր.  
«այս շարժումն ծախքերդ ես պիտի վճա-  
րեմ», դուն քիչ մը հանդիստ ըրէ. մեղք  
ես...»

Մերինները կը սիրեն միայն գործիչե-  
րը քննադատել ստէպ վճատեցնելու նպա-  
տակաւ, և առանց ո՛ւր օգնութեան ձեռք  
կարկառելու անոնց. այս պարագան ցոյց  
կուտայ թէ՛ դեռ մեր զարգացումի մակար-  
դակը ի՞նչ աստիճաններու մէջ կ'երեւայ ու  
պիտի դեգերի առկալն:

Ըսինք որ Եգիպտոս գրաքննութեան  
բոլոր դժուարութիւններէն զերծ է. ուրե-  
մըն միջոցները ընդարձակ են լայն տեսնել  
տալու համար շնորհիւ հրատարակութեան  
ներ, որոնք աւանդ... ցեղերու կեր լինելու  
դատաւարտուած են հայաշատ կեդրոններու  
մէջ. և ի՞նչ զոհարներ չ'կան ատոնց մէջ:

Աւրեմն վստահութեամբ պիտի կրնանք  
ըսել թէ՛ հոս տպագրական գործը մեր  
կարծածէն շատ աւելի արժէք ունի և օգ-  
տակար կրնայ գառնալ ներկայի մէջ ե-  
գիպտահայերուն իսկ ապագայի մէջ ամէն  
հայերու և Աւրեմն ինչո՞ւ անկալ չ'գասենք  
այս տեղի վարժարանէն ալ վեր, որ վեր-  
ջապէս բան մը ըլլալիք չ'ունի. Առաջնորդ-  
դարանէն ալ վեր, ուր անհրաժեշտներուն  
գործի ասպարէզն է միայն. եկեղեցիէն ալ  
վեր, ուր գոնէ շարժի անգամ մը կիրա-  
կի օրերը տրամաբանական քարոզ մ'ալ չը-  
լանր ժողովուրդը և դժգոհ կը մեկնի ան-  
կէ, Պատրիարքարանէն ալ վեր, ուր գոր-  
ծունեութեան սահմանները շատ սեղմ ու

չափազանց անձուկ են. կաթողիկոսարանէն  
ալ վեր, ուր հակառակ կազմ՝ ու պատրաստ  
ճոխագոյն գործիքներու, Աստուածաշունչէն  
վերջ թիֆ թիֆ «Սողոմոն Դաւթի» յիտի  
տպագրեն և Արարատ ամառը ինչ ո՛հեռ. Ե-  
րուսաղէմէն ալ վեր ուր 120 տարիներէ  
ի վեր երկու վեցասեայ Սիսի հրատարակած  
են, 2680 սխալներով Սողոմոն Դաւթի մը՝  
և ութը ֆորմայէ բաղկացեալ առկարա-  
բաւ Երուսաղէմի Ս. տեղեաց ճեարարը, ա-  
ռատութեամբ ունենալով հանդերձ պէտք  
եղած տպագրական գործիքը, տարազը և  
պօշ պարագա ճիւղերը վարժապետներու,  
սարկաւաղներու, լուստարներու, ժամկու-  
ներու ստուար թիւ մը՝ որոնք վրան ամե-  
նամեծ փառացն Աստուծոյ, տոտիկինն փը-  
ռած կը քննան... և վիպերնին կը հա-  
տըցնեն, Աղեքանակի Վահրամ վարժա-  
պետին պէս:

Ինչո՞ք չէր կարող արտագրել Երուսա-  
ղէմը և միաժամանակ ինչո՞ք էլ միաժամը,  
որոնք մեղք է ըսել անգործ, ծոյլ ու դա-  
տարկաններու հանգրուանը դարձած են:  
Աւրեմն խելք խելքի տուած իրարու հար-  
ցնենք թէ՛ Եգիպտոսի մէջ ի՞նչ պէտք է  
ընել տպագրութեանց համար քանի որ չ'հա-  
մազուելու պատճառ մը չ'ունինք թէ՛ շատ  
բան կարելի է ընել հոս միջավայրին թոյ-  
տուութիւններէն օգուտ քաղելով, և հայ  
տպագրութեան ընծայած անձայրածիր օ-  
գուտներուն վրայ մտածելով: Բնականա-  
բար Եգիպտոսը առաջ քշելով՝ ըսել չենք  
ուզեր թէ՛ Անգղիոյ մէջ ալ հայութիւնը իր  
մամուլէ ներկայացուցչները ու տպագ-  
րական գործունեութիւնները չ'ունենայ և  
գործունեութիւն չ'ցոյց տայ. այս ալ նոր  
գիւտ մ'է իր տեսակին մէջ, ու իր օգուտ-  
ները կրնայ ունենալ այնպէս որ՝ հեղինակին  
Օսմանիկ պատուանշան մը չ'նորհէ կ'արժէ-  
սակայն՝ մէկ կողմէն անգլիացիներուն  
սիրտը դէպի հայերը շարժենք ըսելով՝ միւս  
կողմէն ալ անփառական եղած հայերուն  
մտքի անդառնութեան ծորակը գոցելու ջա-  
նալու չէ. այս ընթացքը կը նմանի այն  
շնորհալի ազգաւին նազելափրութեանը,  
որ կարաւի պէս քալիմ ըսելով՝ բուն օգ-  
ուտի քայլերն ալ կը մոռնայ խեղճը...»

Հեռուաբար փութանք ըսել թէ՛ բան  
մը՝ որով նուազ զբաղելու միտքով կը տես-  
նուի Եգիպտոսի մէջ՝ ի՞նչ բանի վրայ ար-  
դէն աշխուժով կը մտածենք որ՝ այն ալ  
հայ տպագրութեան ամենակարեւոր և օգ-  
տաշատ գործն է: Միօրինակութեան մէջ  
մնալ մեր սեփական յատկութիւններէն մին  
դարձած է. օրինակներ չ'են պակտիբ: Պօլիս  
պանդխտող Արաբիքներէն մեծ մասը  
վիճիկի կ'է մեկնի կ'ըլլար. իսկ Ալիսիներ-  
ը աստուծո՞ւ քիչ մը վերջն ալ ամիրայ  
կը դառնային՝ թէ՛ և հիմա ամիրայու-  
թիւնը ինչու չ'ունենան... Ամերիկայ պան-  
դխտող հայերը ալքերնին կը տնկեն գոր-  
ծարանի մը հիւսիսարեւմտ միջնորդութիւն  
հայերու մեծագոյն մասին իտէպն է՝ կամ  
ճիւղատի ֆապրիքա մը սիկարաճի ըլլալ,  
կամ Ջուրին Գուրանեան քանիչիստ...  
կամ Գալստեան վարժարանը դասատու,  
կամ Առաջնորդարանը դարձելով, կամ  
Իտարգործական ընկերութեան ճիւղի քիւն-  
և կամ է՛ն սօնը թիթիակազմի պատմիկ ըրով

սեղանաւորի ապակեգարանը գտնուել, ու  
ինքն ալ այդ երկու հարաբերակցի շին-  
ուածներուն ետեւը կ'ծկուած, որսի սպա-  
սել...»

Ասոնց բացառութիւնները շատ սակա-  
ւաթիւ են. հայիւ կը պատահի որ մէկն  
ալ Շարա Ապտիւլ ալիլը խանութ մը ու-  
նենայ ակնարկուած տեսակէն, և իբր յա-  
ռաջիկութեան նախակարգաբար՝ քանի մը  
փապուրձ աւելցնէ արդէն գտնուածներուն  
քովիկը. իսկ եթէ ուրիշ մէկն ալ մէկ  
քանիներու դժբաղդութեան զարգացում ըլ-  
լալու համարձակէ... Օ՛, ալ անկէ գէ-  
շը չ'կայ աշխարհիս վրայ... Բայց ուրիշ  
առթիւ մը տեսնենք թէ՛ այս կարծիքը շե-  
տակ է, քանի որ տպագրութեան կողմէ  
Եգիպտոսը բացատրել փորձելու նպատա-  
կաւ այսպիսի տղեր իրարու քով բերինք.  
և թէ՛ ի՞նչ միջոցներ պէտք է ի գործ դը-  
նել հայ տպագրութեան իրական օգուտ  
մը ձեռք բերելու համար:

ՏՈՒՓ. Ա. Յ. ՔԵՐԷՍԵՆԵԱՆ  
Պատիւ ունի ծանուցանել արգոյ հա-  
սարկուցութեան թէ՛ իր գիւնիկ փոխադրած  
է Տահէրէն ի Շարա Ապտիւլ-Ալիլը, Եգիպ-  
տական թատրոնի կարգը, առաջին փողոցի  
անկիւնի տունը: Հիւանդ կ'ընդունի ամէն  
օր ժամը 2էն 4: Մասնաւոր խնամք տղայոց  
և շղային հիւանդութեանց: 333

ԳԻՏԱԿԱՆ ԷՋԵՐ  
Մի քանի կարեւոր կետեր հիւսիսային դար-  
մանական մեջ. - Մտային վիճակներու խաղաղացած  
դերերը այլ եւ այլ հիւսիսային մեջ. Մարմ-  
նայ մաշուում և հետազոտում. - Ձեռքերու և ոտնե-  
րու ցուրտ և մաշուցիկ զրգարում բուն պատճառը.  
Մարմնամաշուցիկը. - Հեծկանակ կամ կրկն:

Մեր գործարանայ մէջ տեղի ունեցած մա-  
շուումը արդիւնք է անոնց օրինաւոր գործածու-  
թեան, եւ է բան մը որուն բոլոր կենդանական  
կազմակերպութիւնը երկարալից են. Բայց մեր  
Ֆիզիքական և մտաբարական կարողութեանց  
բուն և շարժար գործածութիւնը յատուկ կը  
բերէ հիւանդ մը որ բոլորովին տարբեր է մա-  
շուումէն: Տկարութեան ուժի անկախալ պատճառ-  
նուն կը պատճառէ չափազանց ճնշում և ներ-  
ձուում:

Իւրաքանչիւր ոք որ կը փափաքի մնալ ա-  
ռողջ, պարտի սանձանել իւր գործի ժամերը  
այն կանոններու համեմատ որք կուզան իրեն  
իւր փորձատուութեամբը, և զոր ոչ մի մարդ կըր-  
նայ որոշել իրեն համար:

Մենք չենք կրնար բարեբեկ և կատարե-  
լազործել այն կլիմաները որոնց ներքեւ կապ-  
րինք. բայց կրնանք չափաւորել մեր աշխատու-  
թիւնները անոնց համեմատ:

Ընդհանրապէս՝ ձեռքերու ցրտութեան պատ-  
ճառն է այն վրդովումն որ տեղի կ'ունենայ ախ-  
տակական ջղային դրութեան մէջ, պատճառելով  
մանր երակներու կծկում կամ սեղմում. Իսր-  
մանը կը կայանայ ընդհանուր անոնց շոգ  
տարուելու մէջ. Ամէն օր պաշտ քաղցրով լը-  
ուացուելը, մասնաւորապէս կարեւոր պահե-  
սանել, կամ պաշտ ջուրի մէջ սուզանիլ օգտա-





